

**ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՏԻՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝
ՆՈՒՅՆ ՀԻՄՔՈՎ ԳՐԱԿԱՆ ԼԵՁՎԻ ԵՎ ՆՈՒՅՆ ՃՅՈՒՂԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ**

Ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը, պահպանելով նախկինում ստեղծված ավանդույթը, շարունակում է ծավալել հայերենագիտական լայն գործունեություն, որի վկայությունն են ոչ միայն տարեկան թեմաների (պլանային աշխատանքների) կատարումը, գիտաժողովների և գիտական ընթերցումների կազմակերպումը, հոբելյանական նստաշրջանների անցկացումը, այլև գիտական հրապարակումները, ընդ որում թե՛ հոդվածների և թե՛ մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների տեսքով:

Ահա այս վերջին կոլեկտիվ ուսումնասիրության արդյունք է ստորև գրախոսվող աշխատանքը¹: Այն բաղկացած է վեց ընդարձակ գլխից, համառոտագրություններից և օգտագործված գրականության ցանկից: Վ. Կատվայանը հեղինակ է Նախաբանի, Ա, Բ և Ջ գլուխների, մյուս՝ Գ, Դ և Ե գլուխների հեղինակ են Ա. Աբրահամյանը, Ջ. Բառնասյանը և Հ. Խաչատրյանը:

Ուսումնասիրությունը նոր տիպի է, որովհետև նրանում քննության են առնվում ոչ թե, ասենք, մեկ առանձին բարբառ՝ իր բաղադրիչներով, կամ մեկ առանձին իմաստային (թեմատիկ) խումբ, այլ տարածքային (արևմտյան գաղթավայրերի և Հայաստանի Հանրապետության), ճյուղային (կը մասնիկով կազմության), գործառական (գրական տարբերակի և մերձավոր բարբառների առնչության) հիմքով իրողություններ, որոնք ներկայացվում են ըստ լեզվի համակարգի բաժինների (տարբեր գլուխներում), այլև դրանք ամեն անգամ բերվում են տիպաբանական բնութագիր տվող մերձավորություն/ոչ-մերձավորություն (հեռավորություն) հատկանիշով, և ըստ այդմ ամփոփվում են համապատասխան հարացույցների և աղյուսակների մեջ:

Նախաբանում (էջ 3-13) ընդհանուր գծերով ներկայացվում են արտալեզվական այն հանգամանքները, որոնք վատ են անդրա-

¹ Վ. Կատվայան, Ա. Աբրահամյան, Ջ. Բառնասյան, Հ. Խաչատրյան, Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները, Ե., 2016, 242 էջ:

դարձել հայերենի ոչ միայն գրական, այլև բարբառային տարբերակների վրա, և հետևանքը եղել է այն, որ բարբառների մի մասը վերացել է, առաջ է եկել գրական տարբերակի երկփեղկում, առաջին հերթին՝ քերականական կառուցվածքի մեջ, և առհասարակ բառապաշարի տարբեր շերտերում:

Առաջին գլուխը ներկայացնում է «ընդհանուր տեղեկություններ» Պոլսի բարբառի և Հայաստանում գործածվող *կը* ճյուղի բարբառների վերաբերյալ (էջ 14-34):

Հաջորդ չորս գլուխներում ուշադրության առարկա են այն առնչությունները, որոնք ներկայումս առկա են գրական արևմտահայերենի և Հայաստանի տարածքում գործառող *կը* ճյուղի բարբառների հնչյունական (էջ 35-59), բառապաշարի (գրքում բերվում է հոգնակիով, էջ 60-123), անվանական (էջ 124-155) և բայական (էջ 156-214) համակարգերում: Նման ձևով (առանձին-առանձին) կատարված քննությամբ բացահայտված առանձնահատկությունները ի մի են բերվում վերջում՝ «ըստ դասակարգման զուգաբանական-վիճակագրական սկզբունքի» (էջ 215-236):

Ի՞նչ մտորումների տեղիք է տալիս սույն կոլեկտիվ ուսումնասիրությունը:

1970-ական թթ. Գ. Ջահուկյանը ձեռնամուխ եղավ հայերենի բարբառների նոր դասակարգման, որի էությունը համապատասխան նյութի՝ բարբառային տվյալների («զուգաբանությունների») վիճակագրական-քանակային բաշխումն էր, որը և յուրօրինակ նորություն էր հայ բարբառագիտության մեջ: Այդ բնագավառում Ջահուկյանը իր արածը համարեց «ներածություն» հայերենի բարբառների լայն և արդեն մշակված սկզբունքներով հետազա ուսումնասիրության: Դրանից հետո էլ, միառժամանակ կամ նույնիսկ մեր օրերում, հայերենի բարբառների ուսումնասիրությունը հիմնականում շարունակում է գնալ նկարագրական, այսինքն՝ սոսկ ավանդական («տրադիցիոն») սկզբունքներով, որ առանձնակի անդրադարձել և լայնորեն իրագործել էր իր ժամանակին Հ. Աճառյանը (բնականաբար՝ ոչ անկախ Բ. Պատկանյանից, որ նախանցյալ դարի երկրորդ կեսերից սկսած ձևաբանական դասակարգման էր ենթարկել հայերենի հիմնական բարբառները և ըստ այդմ տվել դրանցից մի քանիսի, ըստ որում առանցքային բարբառների նույնպիսի նկարագրությունը):

Հայ բարբառագիտությունն առ այսօր հեռու է տեսական (ոչ նկարագրական) բարբառագիտություն լինելուց: Այս խնդիրը բարբառագիտական նորագույն ուսումնասիրությունների «միջուկը» պիտի լինի, որպիսով այն լուծում ստանա հատկապես իբրև «ներածության» շարունակություն: Այդ հնարավորությունը տալիս են հայերենի բարբառների հավաքագրված նյութը, հիմնական մասի վերաբերյալ մենագրական կամ այլ կարգի աշխատանքները (հողվածներ, մասնավոր հարցերի վերաբերող դրույթներ, զեկուցումներ և այլն):

Եվ, ահա, այս կուլեկտիվ աշխատության մեջ փորձ է արվում հաղթահարել այդ նկարագրական սկզբունքի ինչ-ինչ մասեր, և դրա փոխարեն անցկացնել (լիովին հենվելով Ջահուկյանի մշակածի վրա) վիճակագրություն բարբառների հնչունական համակարգի և քերականական կառուցվածքի բաղադրիչների զուգադրմամբ՝ ըստ ընտրված բարբառների և նրանց ներկայիս տարածվածության («գործառության») աստիճանի:

Սույն աշխատանքի ամենաառաջին կարևորությունը սա է: Մյուս կարևոր կողմերին կարելի է անդրադառնալ մասնավոր քննարկման ձևով:

Վ. Գ. Համբարձումյան